Հովհաննես Հովհաննիսյան

Տրխուր երգիչը քնարը ձեռին

Տրխուր երգիչը քնարը ձեռին
Ողբում էր անբախտ յուր ճակատագիր,
Քնքուշ ձայները խորտակված սրտին
Չունեին տալու մի խոսք կարեկիր:

Դառնացած հոգով նա խորասուզված
Անցած օրերում, ուզում էր այնտեղ
Գտնել այն հանգիստ, որ երգչին տանջված
Տալ չէր կամենում աշխարհը տգետ:

Բայց և ա՛յն դատարկ որպես անապատ,
Հիշողություններ անցած մանկության, ՝
Կուսի ջերմ սիրտը գլխին հուսահատ
Միայն պարգեց հանգիստ փրկության...

Օ՜հ, թույլ տո՛ւր և ինձ, ընկե՛ր նազելի,
Այս քաղցրը օրին ցանկալ որ, պատած
Անկեղծ սիրովը մատաղ քերթողի,
Ծաղկիս դու չքնաղ, իբրև վարդ փթթած:

Եվ քո անարատ ըզգայուն հոգին
Լինի ինձ աղբյուր վառ երջանկության,
Քո անբիծ սերը կյանքիս խավարին

Ծագե արշալույս նոր բախտի գարնան:

1886